

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում սիրով ընդունեց այցելությունը Անգլիկան եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների քարտուղար Հոգեշնորհ Հայր Ջոն Սատերթուեյտի, որը Նորին Սրբության բերում էր եղբայրական ողջույնը Քենտրբերիի Նորին Ամենապատվություն Մայքլ Արքեպիսկոպոսի:

Հայր Սատերթուեյտը Մայր Աթոռի հյուրը եղավ դեկտեմբերի 14—18 օրերին, ծանոթանալով Սովետական Հայաստանի եկեղեցական կյանքին և Ս. Էջմիածնի հոգևոր-կրթական ու շինարարական գործունեության:

Հարգելի հյուրը այցելեց նաև Ս. Գեղարդի վանքը, Երևանի պետական Մատենադարանը և դիտեց տեսարժան վայրեր ու պատմական հուշարձաններ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

20 դեկտեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ